



Լաբորատոր աշխատանք

ԾԱՆՐՈՒԹՅԱՆ, ԳԱԿԱՐԻ ՇՓՄԱՆ ՈՒԺԵՐԻ ՃԱՓՈՒՄԸ ՈՒԺԱԶԱՓՈՎ

Աշխատանքի նպատակը: Որոշել մարմնի վրա ազդող ծանության ուժը և նրա շարժմանը խոչնդոտող շփման ուժը:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ: Ուժաչափ, գրքերով պայուսակ:

Աշխատանքի ընթացքը: Գրքերով պայուսակը կախել ուժաչափից և գրանցել ցուցմունքը, որը ծանրության ուժն է: Այնուհետև գրքերով լի պայուսակը դնել հարթ սեղանին և ուժաչափի միջոցով ձգել այն: Գրանցել ցուցմունքը, երբ պայուսակը շարժվում է: Այդ ցուցմունքը համապատասխանում է սեղանի կողմից պայուսակի վրա ազդող շփման ուժի մեծությանը: Պակասեցնել գրքերի քանակը և կրկնել չափումները: Նշված աղյուսակում գրանցել նաև շփման և ծանրության ուժերի հարաբերությունը: Ուսուցչի օգնությամբ փորձել մեկնաբանել ստացված արդյունքները:



Փորձը կրկնել մի քանի անգամ, գնդակը գլորելով տարբեր ուժով: Արդյունքները գրանցել աղյուսակում:

Ծանրության ուժ	Շփման ուժ	Ուժերի հարաբերություն
N =	F =	F/N =
N =	F =	F/N =